

ԿԱՐԾԻՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԼԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (**այսուհետ՝ Նախագիծ**) ուսումնասիրության արդյունքում ՀՀ փաստաբանների պալատը (**այսուհետ նաև՝ Փաստաբանների պալատ կամ Պալատ**) գտնում է, որ փաստաբանական ծառայությունների մասով Նախագծի կարգավորումները խնդրահարույց են և անընդունելի:

Նախագծով առաջարկվող կարգավորումներն անհրաժեշտ է դիտարկել նախ և առաջ յուրաքանչյուրի՝ միջազգային պայմանագրերով և ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի համատեքստում, քանի որ փաստաբանական ծառայությունների համար հարկային բեռի անհարկի և էական ավելացումն ուղիղ ազդեցություն է ունենալու փաստաբանական ծառայությունների գնագոյացման վրա՝ շատերին զրկելով իրենց նախընտրած փաստաբանի կողմից որակյալ իրավաբանական ծառայություններ ստանալու հնարավորությունից:

Սրանով է պլանավորված, որ մի շարք միջազգային փաստաթղթերում փաստաբանների հարկման հետ կապված հարցերը դիտարկվում են մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Մասնավորապես, ՄԱԿ-ի «Քրեական արդարադատության համակարգերում իրավաբանական օգնության հասանելիության սկզբունքների ու ուղեցույցների» 56-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն սահմանելու համար խթաններ՝ որպեսզի փաստաբաններն աշխատեն տնտեսապես և սոցիալապես ոչ շահավետ ոլորտներում (օրինակ՝ հարկերից ազատում, կրթաթոշակներ, ճանապարհորդություններ և ապրուստի նպաստ): Նույն փաստաթղթի 61-րդ կետի դ) ենթակետի համաձայն՝ Պետությունները պետք է ապահովեն միջոցների արդարացի և համաչափ բաշխում քրեական հետապնդման մարմինների և իրավաբանական ծառայություններ մատուցողների միջև¹:

Հենց այս սկզբունքներով է պայմանավորված եղել փաստաբանական գործունեության համար հարկման առանձնահատուկ կանոնների նախատեսումը, որոնք ներկայացված Նախագծով, առանց որևէ հիմնավորման և հակառակ միջազգայնորեն ճանաչում ստացած սկզբունքների, վերացվում են՝ իրավապաշտպան գործունեությունը հավասարեցնելով խաղատնային բիզնեսին:

¹ UN Principles and Guidelines on Access to Legal Aid in Criminal Justice Systems, UNODC, New-York, 2013.

Ավելին, պետությունն այս Նախագծով խորացնում է քրեական հետապնդման մարմինների և փաստաբանության միջև պետական ֆինանսական միջոցների բաշխման անհամեմատելի տարբերությունը՝ քրեական հետապնդման մարմինների համեմատ փաստաբանության ինստիտուտի համար ստեղծելով խիստ անհավասար պայմաններ:

1. Ըստ Նախագծի՝ նախատեսվում է փաստաբանական ծառայությունների մատուցումից առաջացող շրջանառության հարկը 2024 թվականի հոկտեմբերի 01-ից դարձնել 10 տոկոս՝ ներկայիս 5 տոկոսի փոխարեն, այսինքն՝ կրկնապատկել շրջանառությունից առաջացող հարկային բեռը, իսկ արդեն 2025 թվականի հունվարի 01-ից նախատեսվում է բացառել փաստաբանական ծառայություն մատուցող հարկ վճարողների գործունեությունը շրջանառության հարկի համակարգում:

Փաստորեն, Նախագծի համաձայն՝ փաստաբանական ծառայություն մատուցող սուբյեկտները 2025 թվականի հունվարի 01-ից հարկադրված են լինելու գործել հարկման ընդհանուր համակարգում, ըստ այդմ՝ մատուցվող փաստաբանական ծառայությունների համար կիրառվելու է 20 տոկոս ԱԱՀ: Դրանից զատ, հարկման ընդհանուր համակարգում գործելու դեպքում փաստաբանական ծառայություն մատուցողները վճարելու են նաև շահութահարկ, որի դրույքաչափը կազմում է 18 տոկոս, և որը հաշվարկվում է հարկվող շահույթից՝ հարկային տարվան վերագրվող համախառն եկամտի և նվազեցումների (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ) տարբերությունից:

Այդպիսով, փաստաբանական ծառայությունների մատուցման գործարքից ներկայիս առաջացող 5 տոկոս շրջանառության հարկի փոխարեն կիրառվելու է 20 տոկոս ավելացված արժեքի հարկ, ինչպես նաև, հարկային տարվա արդյունքում, հաշվարկվելու է նաև 18 տոկոս շահութահարկ՝ հարկվող շահույթից:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ փաստաբանական ծառայությունների գերակշիռ մասը մատուցվում են ֆիզիկական անձանց՝ ակնհայտ է, որ փաստաբանական ծառայության մատուցումից առաջացող և պետական բյուջե վճարվող 20 տոկոս ավելացված արժեքի հարկը հետագայում որևէ անձի կողմից որպես կանոն հնարավոր չի լինելու որևէ կերպ օգտագործել: Ընդ որում՝ միանշանակ է, որ փաստաբանական ծառայություն մատուցող հարկ վճարողներն ընդհանուր հարկման համակարգում գործող այլ հարկ վճարողներից շատ փոքր ծավալի ապրանք կամ ծառայություն կամ աշխատանք են ձեռք բերում:

Ըստ այդմ, ավելացված արժեքի հարկի մասով փաստաբանական ծառայության մատուցումից առաջացող հարկի դրույքաչափը փաստացի կազմելու է հենց 20 տոկոս:

2. Ակնհայտ է, որ Նախագծի ընդունման դեպքում փաստաբանական ծառայություններ մատուցող սուբյեկտների հարկային բեռը ներկայիս համեմատ կտրուկ և անհամաչափ աճելու է, ինչը հանգեցնելու է փաստաբանական ծառայությունների իրական ինքնարժեքի զգալի աճին, ըստ այդմ՝ փաստաբանական ծառայությունների կտրուկ գնաճին:

Պակաս կարևոր չէ նաև ազգաբնակչության ոչ բավարար գնողունակությունը, որպիսի պայմաններում առաջարկվող փոփոխություններով փաստաբանական ծառայությունների գների անխուսափելի բարձրացումը, վերջին հաշվով, հարվածելու է նախ և առաջ միջին վիճակագրական քաղաքացիների շահերին, ովքեր կգրկվեն որակյալ իրավաբանական ծառայություններ ստանալու հնարավորությունից:

Նախագիծ մշակողն այս ոլորտում պատշաճ ուսումնասիրություն չի կատարել:

ՀՀ Սահմանադրության 63-րդ և 64-րդ հոդվածների լույսի ներքո, Նախագիծը մշակող մարմինը պետք է տեղեկություններ հավաքեր հետևյալ հարցերի պատասխանները ստանալու համար՝

1. Հայաստանի Հանրապետությունում որքա՞ն փաստաբան է գործում.
2. Փաստաբանական գործունեություն իրականացնող քանի՞ տնտեսվարող սուբյեկտ է գործում.
3. Փաստաբանական գործունեություն իրականացնողներից քանիսի շրջանառությունն է տարեկան գերազանցում 1 մլն. ՀՀ դրամը, 5 մլն. ՀՀ դրամը, 10 մլն. ՀՀ դրամը, 20 մլն. ՀՀ դրամը, 30 մլն. ՀՀ դրամը, 50 մլն. ՀՀ դրամը և 100 մլն. ՀՀ դրամը.
4. Տարեկան քանի՞ քրեական գործ է քննում ՀՀ քննչական կոմիտեն.
5. Տարեկան քանի՞ քրեական գործ է քննում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում.
6. Տարեկան քանի՞ նյութ է նախապատրաստվում ՀՀ ոստիկանության մարմնում և մյուս հետաքննության մարմիններում.
7. Տարեկան քանի՞ գործ է քննում առաջին ատյանի դատարանը՝ քաղաքացիական գործերով.
8. Տարեկան քանի՞ գործ է քննում առաջին ատյանի դատարանը՝ քրեական գործերով.
9. Տարեկան քանի՞ գործ է քննում վարչական դատարանը՝ վարչական գործերով.
10. Տարեկան քանի՞ գործ է քննում վերաքննիչ քաղաքացիական դատարանը.
11. Տարեկան քանի՞ գործ է քննում վերաքննիչ քրեական դատարանը.
12. Տարեկան քանի՞ գործ է քննում վերաքննիչ վարչական դատարանը.
13. Տարեկան քանի՞ գործ է քննում Վճռաբեկ դատարանը.
14. Հայաստանի Հանրապետությունում որքա՞ն հանրային պաշտպանի հաստիք է սահմանված.
15. Տարեկան քանի՞ գործով (քրեական, քաղաքացիական, վարչական, սահմանադրական) է հանրային պաշտպանի գրասենյակն անվճար իրավաբանական օգնություն տրամադրում:

Այս և այլ մի շարք հարցերի պատասխանները ստանալուց հետո միայն կարելի է քննարկել հարկային բեռի փոփոխման անհրաժեշտությունը:

Ակնառու է, որ փաստաբանական ծառայությունները հատկապես քաղաքացիների համար դառնալու են էապես դժվար հասանելի և/կամ մատչելի, խաթարվելու է իրավաբանական օգնության հանրամատչելիությունը հատկապես

նյութական ապահովության ոչ բարձր մակարդակ ունեցող քաղաքացիների համար, ովքեր այլևս ի գորու չեն լինելու իրականացնել սեփական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը փաստաբանական ծառայությունների միջոցով: Նշվածի հետևանքով պարբերաբար տեղի է ունենալու **ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ դատական պաշտպանության, արդար դատաքննության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների խախտում, և բացի դա՝ հատկապես մրցակցային դատավարությունում, ինչպիսին բնորոշ է քաղաքացիական դատավարությանը՝ դատական գործերի ելքը մեծապես պայմանավորվելու է կողմերի սոցիալական վիճակով, քանզի շատանալու են դեպքերը, երբ կողմերից մեկը հնարավորություն ունի օգտվել փաստաբանական ծառայություններից ու ստանալ պրոֆեսիոնալ իրավաբանական օգնություն, իսկ հակառակ կողմն այդպիսի հնարավորություն չունի և այդպիսով մյուս կողմի համեմատ հայտնվելու է նվազ բարենպաստ իրադրությունում:**

Հատկանշական է, որ միայն 2022 թվականին (2023 թվականը դեռևս ամբողջությամբ ամփոփված չէ) ընդհանուր առմամբ դատարան ներկայացված և քննված գործերի վիճակագրական տվյալների հանրագումարը կազմում է թվով 257.204 գործ², ընդ որում՝ նշված թվաքանակի մեջ ներառված չէ նախորդ տարիներից դատարաններին փոխանցված գործերը, և դա ընդամենը գործերի քանակական ցուցանիշն է: Նշված գործերի մասնակիցներ հանդիսանում են հայցվորը(ները) և պատասխանողը(ները), մեղադրյալը(ները) և տուժողը(ները), երրորդ անձինք և վկաները, դիմողները հատուկ վարույթներով և այլոք: Ավելին այդ թվաքանակի մեջ ներառված չէ նաև մինչդատական վարույթի մասնակիցների, հաշտությամբ ավարտվող վեճերի վերաբերյալ տվյալները, ովքեր ևս օգտվում են փաստաբանական ծառայություններից: Այս ամենը սուբյեկտների նվազագույն թվական ցուցիչն է, և թվային ամենապարզ հաշվարկով 500.000-ը գերազանցող անձինք Նախագծի ընդունման արդյունքում հայտնվելու են անբարենպաստ իրավիճակում:

Կրկին անդրադառնալով Նախագծի ընդունման դեպքում քաղաքացիների համար փաստաբանական ծառայությունների գների թանկացումը՝ պետք է փաստել, որ փաստաբանական գրասենյակն իր կողմից գնահատված ծառայության գումարին ստիպված ավելացնելու է առնվազն 20 տոկոս ավելացված արժեքի հարկը, որը փոխանցելու է պետությանը: Փաստաբանական գրասենյակը, ելնելով իր ծառայության բնույթի առանձնահատկությունից, ԱԱՀ ներառող ծախսեր³ կատարելու լայն հնարավորություն չունի, որպեսզի հաշվանց կատարի: Հետևաբար ԱԱՀ-ի գումարը պետք է փոխանցի պետական բյուջե:

² Տես՝ <https://court.am/hy/statistic-type/24>

³ ԱԱՀ ներառող ծախսեր կարող են լինել էլեկտրոններգիայի, գազամատակարարման, հեռախոսային ծառայությունների ծախսերը, որոնց գումարների 16,67 տոկոսը կարող է հաշվանցվել: Այս ծառայությունների գծով հաշվանցվող ԱԱՀ գումարը փաստաբանի շրջանառության մեջ փոքր տոկոս է կազմում

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող փաստաբանական գրասենյակները այս պահին գործող օրենսդրությամբ հետևյալ հարկային վճարումներն են կատարում՝

- 5 տոկոս շրջանառության հարկ.
- 25 տոկոս⁴ եկամտային հարկ, որպես աշխատակիցների հարկային գործակալ⁵.
- 5 տոկոս շահաբաժնի հարկ:

Նախագծի ընդունման դեպքում իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող փաստաբանական գրասենյակները հետևյալ հարկային վճարումներն են կատարելու՝

- **20 տոկոս** ավելացված արժեքի հարկ՝ շրջանառությունից.
- **18 տոկոս** շահութահարկ՝ համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունից.

- 23 տոկոս⁶ եկամտային հարկ, որպես աշխատակիցների հարկային գործակալ.
- 5 տոկոս շահաբաժնի հարկ:

Տվյալ դեպքում, Նախագծով պետությունը փաստորեն զրկում է փաստաբաններին հարկային հարաբերականորեն պարզեցված ռեժիմից և ծանրացնում է փաստաբանների հարկային բեռը, ինչպես նաև դրանով պայմանավորված՝ փաստաբաններին ներքաշում է լրացուցիչ փաստաթղթաշրջանառությամբ պայմանավորված բյուրոկրատական խրթին ընթացակարգերի մեջ: Պետության նման քաղաքականությունը, հակասելով սահմանադրական կարգավիճակ ունեցող փաստաբանության ինստիտուտի հանդեպ Հայաստանի Հանրապետության ունեցած սահմանադրական պոզիտիվ պարտականություններին, փաստորեն ունենալու է բացասական ազդեցություն փաստաբանների կենսաապահովման մակարդակի, գործունեության մոբիլության և անկաշկանդության վրա՝ այդպիսով ազդելով որակյալ իրավաբանական օգնություն տրամադրելու փաստաբանների շարունակական մոտիվացիայի վրա: Իսկ հասարակության համար նման իրավիճակն ունենալու է հետևյալ ակնհայտ հետևանքները՝ փաստաբանությամբ զբաղվողների թվաքանակի կրճատում, մատուցվող ծառայությունների գների բարձրացում և (կամ) ծառայությունների որակի վատթարացում:

Այժմ փաստաբանական ակադեմիայում սովորում են տասնյակ մեր ապագա գործընկերները, որոնք ակնկալում են մտնել փաստաբանական համայնք իրենց աշխատասիրությամբ, հմտություններով: Քիչ չեն նաև այն մարդիկ, որոնք սովորում են կրթական տարբեր բուհերում և արդեն իսկ ծրագրել են դառնալ փաստաբան:

Առաջարկվող նախագիծն ընդունվելու դեպքում փաստաբան դառնալու ցանկություն ունեցող անձանց թիվը միանշանակ կկրճատվի, իսկ այժմ փաստաբանական ակադեմիայում սովորող անձինք փաստաբանական համայնքում որպես անհատ փաստաբան կայանալու նպատակը շատերի համար չի իրականանա: Փաստաբանական համայնք կարող են մտնել արդեն իսկ կայացած անձինք կամ այն

⁴ վերցված է միջինը

⁵ չի ներառվել դրոշմանիշների և պարտադիր կուտակային վճարները

⁶ վերցված է միջինը

անձինք, որոնք ունեն կողմնակի եկամուտ: Այս պայմաններում սույն մասնագիտության մեջ մտավոր կարողությունները և աշխատասիրությունը մրցակցության բաղադրիչ չեն հանդիսանա:

Այդպիսով կխաթարվի փաստաբանական համայնքում մրցակցային, որակյալ կադրերով ապահովելը՝ արդյունքում այն կարող է հետագայում լուրջ ազդեցություն թողնել փաստաբանական համայնքի համար, մասնավորապես՝ փաստաբանական սերնդափոխության համար:

Միաժամանակ, առաջարկվող փոփոխությունը հանգեցնելու է հասարակության և անհատի իրավական պաշտպանության առումով պետության կողմից իր պոզիտիվ սահմանադրական պարտականությունների ոչ պատշաճ կատարմանը, ինչպես նաև իրավական պետություն հանդիսացող ՀՀ-ում փաստաբանության աճող դերի և նշանակության խոչընդոտմանը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայով սահմանված են անձանց իրավական պաշտպանության և իրենց նախընտրած պաշտպանի կամ ներկայացուցչի կողմից պաշտպանության իրավունքը: Այս իրավունքն ակնառու է և արտացոլված է ԵԱՀԿ մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների մեջ:

«Փաստաբանների դերի մասին»⁷ (ընդունված 1990թ.) ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները հաստատում են բոլորի իրավական օգնության իրավունքը և կոչ են անում պետություններին ստեղծել արդյունավետ և ոչ խտրական ընթացակարգեր «փաստաբանների արդյունավետ և հավասար մատչելիության» մեխանիզմները, ինչպես նաև ապահովել այդ մեխանիզմը բավարար ֆինանսավորմամբ և տրամադրել ռեսուրսներ՝ անվճարունակ անձանց համար իրավաբանական ծառայությունների համար» (հիմնարար սկզբունք 1-4):

Ամբաստանյալն իրավունք ունի պաշտպանվել իր սեփական ընտրած խորհրդատուի կողմից (ICCPR, Article 14(3)(b); ECHR, Article 6(3)(c).): Պաշտպանվելու իրավունքը խախտվում է, եթե կալանավորին թույլ չեն տալիս օգտվել իր ցանկությամբ ընտրված փաստաբանի ծառայությունից: Եվրոպական դատարանն ուշադրություն է դարձրել փաստաբանի մատչելիության հարցին «Գոլդերի» եզրակացությունում, «*[h] եթե իջնում է արդյունավետ իրավունքի իրականացումը, կարող է նշանակել այդ իրավունքի խախտում, նույնիսկ եթե խոչընդոտը հանդիսանում է ժամանակավոր բնույթ»*: (Golder v. UK, ECtHR Judgment, 21 February 1975, §26.292):

Միջազգային ստանդարտները պահանջում են, որ անվճարունակ ամբաստանյալներին տրամադրվեն անվճար կամ պետականորեն երաշխավորված իրավական օգնություն, երբ դա պահանջում է արդարության շահերը: Որտեղ իրավունքները սահմանափակելիս անձի ազատությունը և արդարության շահերը

⁷ ՀՀ իրավական ակտերի համակարգում ներառված է «Իրավաբանների դերի մասին» վերնագրով

վտանգված է, սկզբունքորեն կոչ են անում երաշխավորել իրավաբանական ներկայացուցչությունը (Benham v. United Kingdom, ECtHR Judgment, 10 June 1996, §61; see also Quaranta v. Switzerland, ECtHR judgment of 24 May 1991):

«Փաստաբանների դերի մասին» ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները ենթադրում են, որ «[ա] նման անձինք, ովքեր չունեն փաստաբան, իրավաբանական օգնության իրավունք ունեն բոլոր այն դեպքերում, երբ դա պահանջում է արդարության շահերը, իրավունք ունեն ունենալու փորձառու և իրավասություն իրավաբան, որը համապատասխանում է նրան վերագրվող հանցագործության բնույթին, որպեսզի նրանք արդյունավետ իրավական օգնություն ցույց տան, առանց դրանց համար լրիվ կամ մասնակի վճարման, եթե նրանք բավարար միջոցներ չունեն նման ծառայությունների համար վճարելու համար »:

Պետությունը պարտավոր է երաշխավորել ձեռնահաս և արդյունավետ ներկայացուցչության տրամադրումը:

«Փաստաբանների դերի մասին» ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները պահանջում են, որ պետությունները «ապահովեն, որ փաստաբանները կարողանան կատարել իրենց բոլոր մասնագիտական գործառույթները՝ առանց վախենալու, խոչընդոտների, ոտնձգություն կամ ոչ պատշաճ միջամտություն. ի թիվս այլոց, և նրանք (փաստաբանները) չպետք է տուժեն կամ նրանց սպառնան, ինչպես նաև դատական կամ վարչական, տնտեսական կամ այլ պատժամիջոցներով՝ ընդունված մասնագիտական պարտականություններին, չափանիշներին և էթիկայի սկզբունքներին համապատասխան կատարված գործողությունների համար» (հիմնարար սկզբունքների 16 կետ):

Սկզբունքները նաև պահանջում են, որ փաստաբանները «օգտվեն քաղաքացիական և քրեական անձեռնմխելիությունից՝ կատարված համապատասխան հայտարարությունների համար» (հիմնարար սկզբունքների 20 կետ):

3. 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած քրեական դատավարության օրենսգիրքը մեծացրել է քրեական վարույթում պաշտպանի դերակատարումը և ընդլայնել նրա վարույթային հնարավորությունները՝ ձերբակալված անձի ու մեղադրյալի իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանությունն ապահովելու նկատառմամբ: Քրեական վարույթին պաշտպանի վաղ մասնակցությունն ամրագրելը, պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերի շրջանակն ընդլայնելը, նրան նոր իրավունքներ վերապահելը վերջինիս դարձնում են քրեական վարույթի առանցքային դերակատարներից մեկը, առանց որի որոշակի վարույթային գործողությունների կատարումը պարզապես անհնար է (օրինակ՝ դատական նիստ անցկացնելը՝ մեղադրյալի բացակայությամբ կամ հեռակա վարույթը շարունակելը): Սակայն, առավելապես առաջադիմական այս կարգավորումները, մասնավորապես անձին ձերբակալման որոշումը հանձնելու պահից պաշտպանի պարտադիր մասնակցության պահանջը, դեպքերի ճնշող մեծամասնության պարագայում քրեական հետապնդման մարմինները չեն կարողանում ապահովել՝ հանրային

պաշտպանների սուղ թվաքանակի պատճառով: Նախագծով առաջարկվող կարգավորումների ընդունման դեպքում համակարգային այս խնդիրն ավելի է խորանալու:

4. Փաստաբանների պալատի դիտարկմամբ՝ առաջարկվող սահմանափակումները հանգեցնելու են անվճար իրավաբանական օգնություն ստանալու մտադրություն և ցանկություն ունեցող անձանց թվաքանակի շեշտակի աճին, ինչն իր հերթին հանգեցնելու է Հանրային պաշտպանի գրասենյակի՝ առանց այդ էլ առկա գերծանրաբեռնվածության է՛լ ավելի մեծացմանը:

Նշվածը, իր հերթին, անխուսափելիորեն բացասաբար է ազդելու անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց մատուցվող ծառայությունների որակի ու արդյունավետության վրա, իսկ որոշ դեպքերում ընդհուպ հանգեցնելու է այդ անձանց փաստացի մեկուսացմանն իրավաբանական օգնությունից՝ խախտելով սահմանադրական այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքները:

Ավելին, նկարագրվող զարգացումներն անխուսափելիորեն հանգեցնելու են հանրային պաշտպանների թվաքանակն էապես ավելացնելու անհրաժեշտության առաջացմանը, որն իր հերթին ավելացնելու է պետական բյուջեի բեռը և առաջացնելու է անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովման նպատակով պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացման անխուսափելի անհրաժեշտություն:

Առանց հաշվի առնելու այս ամենը Նախագիծը մշակողը տեղեկանք-հիմնավորման մեջ անհասկանալի կերպով ամրագրել է, որ *նախագծի ընդունումը լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի պահանջում:*

5. Վերոգրյալից զատ հարկ է նշել, որ Փաստաբանների պալատը՝ որպես կառույց «Փաստաբանության մասին» օրենքի, ինչպես նաև Պալատի իրավական ակտերին համապատասխան տարբեր միջոցներով խրախուսում⁸ է նաև հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների կողմից քաղաքացիներին

⁸ «Փաստաբանության մասին» օրենքի 44.1 հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *Կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը խրախուսելու նպատակով փաստաբանների պալատի խորհուրդը՝ ի թիվս այլնի, կարող է նախատեսել ... չափանիշներին համապատասխանող կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրած (ծրագրեր կազմակերպած) փաստաբաններին և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպություններին խրախուսելու այլ միջոցներ:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. «Կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 2/11-լ որոշման հավելվածի 37-րդ կետին համապատասխան՝ *սահմանված նվազագույն չափանիշներին համապատասխան կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրած փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ամփոփ ցուցակը հրապարակվում է Պալատի և Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում, ցուցակում ընդգրկված փաստաբաններն ազատվում են ընթացիկ տարվա վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունից, ինչպես նաև վերջիններս կարող են խրախուսվել Պալատի նախագահի կողմից Պալատի կանոնադրությամբ սահմանված այլ եղանակներով:*

անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը, սակայն հարկման ընդհանուր համակարգում գործելու դեպքում դա ևս բացառվելու է, քանի որ անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքում ևս պետք է հաշվարկվի և վճարվի ավելացված արժեքի հարկ՝ 20 տոկոս դրույքաչափով, ինչը բխում է Հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասից:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ շուրջ 2 տարի առաջ էապես բարձրացվել են նաև դատարան դիմելու համար պետական տուրքերը, ինչն արդեն իսկ քաղաքացիների համար որոշ չափով նվազեցրել է դատարանի մատչելիության իրավունքի հասանելիությունը, ուստի առկա պայմաններում նշված թանկացումը կարող է համակցությամբ լրջորեն վնասել անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությանը: Այստեղ կարելի է հիշատակել նաև վերջերս շրջանառության դրված ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և ««Քաղաքացիական դատավարության օրենսգրքում» լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որով օրինակ նախատեսվում էր **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի դրույքաչափերի «մեղմ ասած» ավելացում, ինչին Փաստաբանների պալատը կրկին դեմ է արտահայտվել:**

Նույն կերպ, հաշվի առնելով, որ անձանց մի շարք իրավունքներ իրացվում են նոտարական կարգով փաստերի հաստատման միջոցով, ինչպես նաև լիազորագրերի և այլ փաստաթղթերի համար ևս հաճախ անհրաժեշտ է դիմել նոտարական ծառայությունների՝ ակնհայտ է, որ անձանց իրավունքների իրացմանն ու պաշտպանությանը խոչընդոտ է հանդիսանալու նաև նոտարական ծառայությունների գնաճը, ինչը ևս տեղի կունենա Նախագծի ընդունման և նոտարական ծառայությունների հարկային բեռի կտրուկ մեծացման արդյունքում:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝ 1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի համաձայն՝ 1. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Այսպիսով, դատական պաշտպանության, արդար դատաքննության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքները հանդիսանում են սահմանադրական իրավունքներ, ընդ որում՝ այդ իրավունքների իրացումը գործնականում որպես կանոն իրականացվում է փաստաբանների միջոցով, ինչն օրենսդրությամբ սահմանված մի շարք դեպքերում ընդհուպ կրում է պարտադիր բնույթ, ինչպես օրինակ քաղաքացիական գործերով ներկայացուցչությունը, քրեական գործերով մեղադրյալի պաշտպանությունը և այլն: Մինչդեռ, Նախագծի ընդունումը նախադրյալ է հանդիսանալու այդ իրավունքի խախտման համար, քանզի նվազելու կամ երբեմն նույնիսկ ի չիք է դառնալու փաստաբանական ծառայությունների հասանելիությունը:

Բացի այդ.

«Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

«Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝ գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

Փաստաբանների պալատը գտնում է նաև, որ Նախագծի ընդունման դեպքում փաստաբանների մասով խախտվելու է նաև «Սահմանադրությամբ ամրագրված՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, քանի որ կտրուկ վատթարացվող հարկային կարգավորումներին դիմակայելը և ձեռնարկատիրական գործունեությունը նոր պայմաններին համապատասխանեցնելը փաստաբանական ծառայություններ մատուցող մի շարք սուբյեկտների, հատկապես՝ ոչ մեծ շրջանառություն ունեցող կամ նորաստեղծ սուբյեկտների համար լինելու է անհնար: Փաստաբանական ծառայություն մատուցող և ոչ մի սուբյեկտ ի զորու չի լինելու կրել ավելացվող ֆինանսական բեռը՝ առանց ծառայությունների գնի բարձրացման, բայց և այնպես՝ փաստաբանական ծառայություններ մատուցող ոչ բոլոր սուբյեկտներն են, որ ունակ են լինելու բարձրացնել իրենց ծառայությունների գինը և պահպանել շուկայում իրենց մրցունակությունը և պահանջվածությունը, ինչը հանգեցնելու է նրանց հետագա գործունեության անհնարինությանը: Բացի դա, ընդհանուր հարկման համակարգում գործունեություն իրականացնելու դեպքում էապես բարդանալու է հարկ վճարողների հաշվապահական և հարկային հաշվառման գործառույթների ճշգրիտ

իրականացումը, ինչը պահանջելու է լրացուցիչ ժամանակային և ֆինանսական ռեսուրսներ հատկացնել նաև այդ ուղղությամբ:

Ասվածը նշանակում է նաև, որ Նախագիծը համահունչ չէ ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին կետով հռչակված նպատակին, քանզի չի ծառայելու գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը, այլ՝ ընդհակառակը:

Փաստաբանների պալատը գտնում է, որ ինչպես իրավունքի և/կամ ազատության ցանկացած սահմանափակում, այնպես էլ քննարկվող սահմանափակումները պետք է համապատասխանեն Սահմանադրությամբ նախատեսված պահանջներին, այդ թվում՝ իրավական որոշակիության և համաչափության սկզբունքներին, այլապես այդ սահմանափակումները չեն կարող համարվել իրավաչափ:

Մինչդեռ, տվյալ դեպքում Նախագծով փաստաբանական ծառայությունների համար առաջարկվող հարկային կարգավորումները, որոնք հանգեցնելու են իրավունքների սահմանափակման՝ Փաստաբանների պալատի գնահատմամբ չեն համապատասխանում այդ սկզբունքներին:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

6. Փաստաբանական գործունեությունը իրավապաշտպան գործունեության տեսակ է: Փաստաբանական գործունեությունը գտնվում է պետության անմիջական հոգածության ներքո, ինչը պահանջում է հանրային իշխանությունից փաստաբանությանը վերաբերող ցանկացած փոփոխություն, այդ թվում՝ տնտեսական վերափոխում, դիտարկել ոչ միայն բյուջետային և բիզնես պրիզմայի ներքո, այլ ղեկավարվել հանրության և անհատի իրավունքների և ազատությունների պատշաճ պաշտպանվածության ապահովման պետության պոզիտիվ պարտականության տեսանկյունից, քանի որ փաստաբանությունը չի հանդիսանում ձեռնարկատիրության դասական տեսակ, որի տեսակարար կշիռը և արդյունավետությունը գերազանցապես թողնված է շուկայական կարգավորման կառուցակարգերին: **Փաստաբանությունը մի ոլորտ է, որի շարունակական զարգացումը հանրության և պետության կենսական շահերի տիրույթում է և այդպիսով ենթակա է պետության առանձնահատուկ հոգածության և պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի ներգործությանը:**

Ավելին՝ փաստաբանական ծառայությունների ոլորտի հարկային և վարչարարական բեռի անհիմն ծանրացումը պետության կողմից կարելի է դիտարկել

որպես հանրային իշխանության կողմից փաստաբանների նկատմամբ խտրական վերաբերմունք՝ ի համեմատ գործունեության այն տեսակների, որոնք հետայսու ևս շարունակելու են հանդիսանալ շրջանառության հարկի իրավական ռեժիմի շահառու:

Ամենևին նպատակ չունենալով նսեմացնել բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, գրավատների, խաղատների և շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողների դերը, միևնույն է պարզ չէ, թե ինչ տրամաբանությամբ է առաջարկվում փաստաբանական գործունեություն իրականացնողներին նույն խմբում դասակարգել:

Ավելին, տարբեր է նաև վերոնշյալ սուբյեկտների գործունեության նպատակները և ուշադրության արժանի շահերը: Մասնավորապես՝ վերը թվարկված տնտեսվարող սուբյեկտների գործունեության միակ նպատակը շահույթ ստանալն է, այնինչ **փաստաբանի հիմնական առաքելությունը անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է**, իսկ ուշադրության արժանի շահը՝ արդարադատության շահը (իրավաբանական օգնության իրավունքի մատչելիությունը): **Հետևաբար վերոնշյալ տնտեսվարող սուբյեկտների հետ փաստաբանի նույնացումը, այդ թվում հարկային քաղաքականության մշակման և կիրառման տեսանկյունից, անթույլատրելի է:**

Այլ կերպ ասած՝ Նախագծի հեղինակների կողմից խորապես չեն ուսումնասիրվել առաջարկվող փոփոխությունների թիրախային խմբերի նյութական և մարդկային ռեսուրսների ծավալները, գնագոյացման մեխանիզմները, միջին շրջանառությունը և այլ համազոր առանձնահատկություններ:

7. Նախագծով առաջարկվող իրավակարգավորումը, որով իրավաբանական ծառայություններ մատուցող անձինք դուրս են մղվում շրջանառության հարկով աշխատելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքից, հակասում է փաստաբանության՝ որպես սահմանադրական ինստիտուտի էությանը և հանդիսանում է փաստաբանների արդյունավետ գործառնանը խոչընդոտող հանգամանք:

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը***: (...):

ՀՀ Սահմանադրությամբ հստակորեն ընդգծվում է փաստաբանների իրավապաշտպան գործառույթը, ինչը և հիմք է հանդիսացել փաստաբանությանը սահմանադրական ինստիտուտի կարգավիճակ տալու համար, քանի որ պետությունը, ըստ նույն հոդվածի 1-ին մասի և 61-րդ հոդվածի, ***ունի պոզիտիվ պարտականություն ապահովել յուրաքանչյուր անձի իրավաբանական օգնություն ստանալու և իր իրավունքների ներպետական և միջազգային դատական պաշտպանություն***

ստանալու սահմանադրական իրավունքների իրացման պատշաճ սոցիալ-իրավական պայմաններ:

«Սահմանադրության սույն տրամաբանությանն է հետևել նաև «Սահմանադրական դատարանը, որը 05.04.2016թ. ՍԴՈ 1263 որոշման մեջ հստակորեն արձանագրել է, որ. «... փաստաբանի միջոցով օրենսդիրը ոչ միայն ապահովում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորման իր պոզիտիվ պարտականությունը, այլև երաշխավորում է որակյալ իրավաբանական օգնություն՝ դրանով իսկ երաշխավորելով իրավական պետությանը հարիր արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը՝ ամրագրված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում:»:

Փաստորեն, Սահմանադրական դատարանը Սահմանադրության վերոնշյալ հոդվածները մեկնաբանել է այնպիսի լույսի ներքո, որն էապես ընդլայնել է պետության պոզիտիվ պարտականության շրջանակներն անձի իրավաբանական օգնություն և դատական պաշտպանություն ստանալու սահմանադրական իրավունքների ապահովման ոլորտում, ինչպես նաև փաստաբանության ինստիտուտին ըստ էության վերապահել է սահմանադրաիրավական կարգավիճակ, որպես պետության նշյալ պոզիտիվ պարտականության իրացման հիմնական կառուցակարգերից մեկի:

Ըստ այդմ, փաստաբանության՝ որպես մասնագիտական և իրավապաշտպան սահմանադրական ինստիտուտի բնականոն գործառնման ապահովումը հանդիսանում է իրավունքը խախտված անձին որակյալ և համակողմանի իրավաբանական օգնությամբ ապահովելու պետության պոզիտիվ պարտականության իրացման հիմնական ուղղություններից մեկը: Ակնհայտ է, որ պետությունը հասարակության և յուրաքանչյուր անհատի հանդեպ իր նշված հիմնարար պարտականության պատշաճ իրացնելու համատեքստում կոնկրետ պարտականություններ ունի փաստաբանության ինստիտուտի նկատմամբ, և **այդ պարտականությունն ամենևին չի սահմանափակվում միայն ձևական պետա-իրավական երաշխիքներով՝** փաստաբանությանը նվիրված օրենքի ընդունմամբ, հանրային պաշտպանի գրասենյակին պետական բյուջեից միջոցների հատկացմամբ, փաստաբանության ինքնակառավարման երաշխիքների ընձեռմամբ: Խոսքը վերաբերում է ավելի լայն համատեքստում փաստաբանության համար արդյունավետ գործելու պայմաններ ստեղծելու պետության պարտականությանը: Վերջինս, նախևառաջ, հանգում է տնտեսական երաշխիքներին, որոնք ուղղակիորեն շաղկապված են փաստաբանների կողմից մատուցվող ծառայությունների մասնագիտական որակի և փաստաբանության շարունակական զարգացման վրա ազդող այդ մասնագիտական համայնքի յուրաքանչյուր անդամի ինքնակատարելագործման բնական մոտիվացիայի վրա:

Այլ կերպ ասած՝ փաստաբանն իր մեջ ամփոփում է երկու բնորոշ կողմեր՝ իրավապաշտպան գործառույթի իրականացում և իր մասնագիտական

Ծառայություններով սեփական սոցիալ-տնտեսական կարիքների բավարարում:
Ընդ որում, փաստաբանի որակյալ ծառայությունների մատուցումը պայմանավորված է այս երկու կողմերի ներդաշնակ միասնությամբ. փաստաբանը պետք է ունենա անձնական մոտիվացիա պատշաճորեն կատարելու իր մասնագիտական պարտականություններն իր վստահորդների և լայն իմաստով հասարակության նկատմամբ և, ընդհանրապես, զբաղվելու փաստաբանությամբ՝ որպես մասնագիտական գործունեության տարատեսակով, որպիսի հանգամանքը մեծապես կապված է սեփական աշխատանքով բավարար նյութական միջոցներ վաստակելու և պետության կողմից հարուցվող բյուրոկրատական խոչընդոտներից զերծ մնալու հրամայականի հետ:

8. Գործող հարկային օրենսգրքի իրավակարգավորումների պայմաններում փաստաբանները, հնարավորություն ունենալով գործել շրջանառության հարկի իրավական ռեժիմում, մեծապես ազատված են եղել հարկային-իրավական փաստաթղթաշրջանառությունից, ինչը բնորոշ է շահութահարկի և ավելացված արժեքի հարկի իրավական ռեժիմում աշխատող տնտեսվարողներին: Շրջանառության հարկի իրավական ռեժիմը ենթադրում է նաև պետության ավելի նվազ վերահսկողություն, ինչը թույլ է տալիս փաստաբաններին կրճատել հարկային մարմնի հետ հարաբերությունների վրա ծախսվող ժամանակն ու միջոցները և ամբողջովին կենտրոնանալ իրենց մասնագիտական գործառույթների բարեխիղճ և որակյալ կատարման վրա: Նման իրավիճակը բարենպաստ պայմաններ էր ստեղծում պետությունից փաստաբանների անկախության ապահովման համար, ինչը նաև սահմանադրական պահանջ է՝ ի դեմս ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի:

Փաստաբանի անկախությունը պետությունից խիստ կարևոր է փաստաբանական գործառույթների պատշաճ կատարման համար, քանի որ փաստաբանը բնականորեն հանդիսանում է կապող օղակ հանրության և պետության միջև՝ ի դեմս դատարանների և վարչական մարմինների, նպաստում է արդարադատության պատշաճ իրականացմանը:

Փաստաբանի սահմանադրական սույն կարգավիճակն իր զարգացումն է ստացել նաև օրենսդրական մակարդակում: Մասնավորապես, «Փաստաբանության մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:

Փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի

իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

Փաստաբանի անկախությունը, նախևառաջ, հանգում է պետական համակարգում ընդգրկված չլինելուն և պետությունից վարչական և ֆինանսական կախվածություն չունենալուն, ինչպես նաև փաստաբանների նկատմամբ պետության վարչաիրավական ազդեցության լծակների հնարավորինս սակավությանը: Բնական է, որ հարկային պարտավորությունների հետ կապված վարչաֆինանսական հարաբերությունները հանդիսանում են պետության իրավական և քաղաքական առաջնային լծակներից, որոնց գործադրման շրջանակների ընդլայնումը փաստաբանների դեպքում սպառնում է փաստաբանների անկախության սահմանափակմանը՝ դառնալով փաստաբանների մասնագիտական գործունեությամբ պայմանավորված՝ պետական ինստիտուտների պաշտոնական և ստվերային ազդեցությունների և ճնշումների հնարավոր միջոց:

Նախագծով փաստաբանների հարկային բեռի ավելացումը և նրանց նկատմամբ հարկային վարչարարության խստացումը մեծացնելու է փաստաբանների կախվածությունը պետությունից և չհիմնավորված կերպով բազմապատկելու է փաստաբանների շփումները պետական պաշտոնատար անձանց հետ, ինչը, ելնելով նրանից, որ փաստաբանների վստահորդների շահերը շատ հաճախ առնչվում են հարկային և պետական այլ մարմինների, կարող են ստեղծել փաստաբանների և վստահորդների շահերի միջև հակասություններ՝ հանգեցնելով փաստաբանների ներքին գրաքննության դեպքերի, ինչպես նաև բացասաբար ազդել փաստաբանի մասնագիտական բարեխղճության վրա:

Սույն համատեքստում հարկ է մեջբերել նաև փաստաբանի անկախության վերաբերյալ միջազգային փաստաթղթերի դրույթները, որոնք համահունչ են արտահայտվող մտահոգություններին:

Մասնավորապես, Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնագրքի 2.1.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պետք է բացարձակապես անկախ լինի ցանկացած ազդեցությունից, հատկապես... արտաքին ճնշումից:

Եվրոպական համայնքի փաստաբանական միությունների խորհրդի 1977թ. Պերուջիայի հռչակագրի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ...փաստաբանի անկախությունը .. նույնքան կարևոր է արդարադատության իրականացմանը համար, որքան դատավորի անաչառությունը:

Արդարադատության իրականացման և մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի համակարգում փաստաբանների կենտրոնական տեղին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Tuheiava v. France գործով 2018թ. օգոստոսի 28-ի իր վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ պետության միջամտությունը փաստաբանի գործունեությանը խախտում է փաստաբանի անկախությունը և մասնագիտական հատուկ կարգավիճակը: Փաստաբաններն ունեն հատուկ հասարակական կարգավիճակ, որը նրանց տալիս է կենտրոնական տեղ արդարադատության

իրականացման գործընթացում՝ որպես միջնորդներ հասարակության և դատարանների միջև: Հետևաբար փաստաբանները պետք է ունենան երաշխիքներ իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս:

Եթե Եվրոպական դատարանի վերոնշյալ դիրքորոշումը համադրենք պետության միջամտության իրավաչափության նույն Դատարանի կողմից մշակված թեստին՝ կապված, մասնավորապես, պետության միջամտության իրավաչափության, հիմնավորվածության և համաչափության հետ, ապա ակնհայտ է դառնում, որ փաստաբանների հարկային բեռի և հարկային-իրավական փաստաթղթաշրջանառության մեծացումը չունի իրավաչափ նպատակ և հիմնավորվածության ու համաչափության անհրաժեշտ մակարդակ, ինչը նաև ամրագրված է ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով:

Սույն փոփոխությունն Ազգային ժողովի կողմից ընդունվելու պարագայում էապես կսահմանափակի փաստաբանների անկախությունն ու մասնագիտական անկաշկանդությունը հատկապես պետական մարմինների հետ հարաբերություններում, ինչը բացասաբար կազդի վստահորդների իրավունքների և օրինական շահերի պատշաճ պաշտպանվածության և, ընդհանրապես, ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վրա:

9. Ուսումնասիրելով Նախագծի հիմնավորումները՝ հարկ ենք համարում նշել, որ փաստաբանական ծառայությունների հարկման կարգավորումների խստացումը որևէ կերպ հիմնավորված և պատճառաբանված չէ:

Նշվածը թույլ է տալիս պնդել, որ Նախագծի քննարկվող կարգավորումները չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերը տվյալ դեպքում սահմանված չեն՝ ի խախտումն Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջների:

Ավելին, տվյալ սահմանափակումները չեն համապատասխանում Սահմանադրության նաև 78-րդ հոդվածին, քանի որ ըստ էության պարունակում են անձի իրավունքների և ազատությունների սահմանափակում՝ առանց հիմնավորելու այդ սահմանափակման պիտանիությունը, անհրաժեշտությունը և համարժեքությունը:

Պարզ չէ նաև, թե Նախագիծը մշակելիս ինչու և ինչպե՞ս է որոշվել, որ առկա շրջանառության հարկի համակարգում գործունեությունը թույլատրված բազում ոլորտներից հենց փաստաբանական ծառայություններ մատուցողներն են, որ չպետք է կարողանան գործել շրջանառության հարկի համակարգում: Հայտնի չէ, թե ո՞րն է այդպիսի հետևության հիմքը, և հաշվարկային կամ այլ ի՞նչ տվյալներ են պատճառ հանդիսացել Նախագծում այդպիսի կարգավորումների նախատեսման համար:

Նախագիծը մշակելիս հաշվի չի առնվել փաստաբանության իրավապաշտպան բնույթը, ինչպես նաև այն, որ փաստաբանական ծառայությունների մատուցումը շատ հաճախ տեղի է ունենում հենց իրավապաշտպան, ոչ թե ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում, ուստի այս մասով ևս Պալատը գտնում է, որ փաստաբանական ծառայությունների հարկման հարցում պետության քաղաքականությունը չպետք է խստացվի և այն էլ՝ հավասարեցվի բացառապես

տնտեսական նշանակություն ունեցող այնպիսի ոլորտների, ինչպիսիք են խաղատները, շահումով խաղերը, գրավատները, վիճակախաղերը և այլն:

Փաստաբանների պալատը միևնույն ժամանակ գտնում է, որ օրենսդրական յուրաքանչյուր փոփոխության դեպքում պետք է գործի տվյալ պահին առկա իրավակարգավորումների «անսխալության կանխավարկածը», և հիմնավորման ենթակա պետք է լինի ոչ թե գործող իրավակարգավորումներն անփոփոխ թողնելու, այլ՝ դրանք փոփոխելու անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը:

Այլ խոսքով՝ բոլոր այն դեպքերում, երբ նախաձեռնվում է անձանց իրավունքները և ազատությունները սահմանափակող օրենսդրական փոփոխություն՝ նախաձեռնողն է պարտավոր հիմնավորել իր օրենսդրական նախաձեռնության անհրաժեշտությունը, ոչ թե անձը՝ հիմնավորել այդ նախաձեռնության անհրաժեշտության բացակայությունը, այսինքն՝ նախաձեռնողը պարտավոր է հիմնավորել, որ առկա են անձի իրավունքների և ազատությունների լրացուցիչ սահմանափակման հիմքեր՝ իրավաչափ նպատակի հասնելու համար, և որ այդ սահմանափակումների ներդրման օրենսդրական նախաձեռնությունն իրապես անհրաժեշտ է, իրավաչափ ու նպատակահարմար:

Վերոգրյալի հաշվառմամբ Փաստաբանների պալատը գտնում է, որ Նախագծով փաստաբանական ծառայությունների մասով առաջարկվող սահմանափակումները պարունակում են մի կողմից՝ իրավաբանական օգնություն ստանալու, արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների, մյուս կողմից՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի ոչ իրավաչափ միջամտություններ՝ խախտումներ, քանզի այդ միջամտությունները չեն հետապնդում իրավաչափ նպատակներ, չեն բավարարում իրավաչափ նպատակին հասնելու համար պիտանիության, անհրաժեշտության և համարժեքության սահմանադրական պահանջներին, ինչպես նաև բացահայտված և բավարար չափով հիմնավորված չեն այդ միջամտությունների հիմքերը:

Միաժամանակ, անհրաժեշտ է հիշատակել, որ դեռևս 2019 թվականին շրջանառվել է նույնական՝ վիճելի դրույթներով, առանց ընդունման հիմնավորման նախագիծ, որը հանվել է շրջանառությունից, և պարզ չէ, թե ներկայումս ինչ տրամաբանությամբ և ինչպիսի նոր հանգամանքների բերումով է նույնաբովանդակ նախագիծը կրկին դրվել քննարկման:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը, Փաստաբանների պալատը ինչպես նախկինում, այնպես էլ այժմ բացասական է համարում փաստաբանական ծառայությունների մասով Նախագծում տեղ գտած կարգավորումները և առաջարկում է հանել Նախագիծը շրջանառությունից:

Կատարող՝

Օրենսդրության վերլուծության և իրավական ապահովման բաժին

Հեռ.՝ (+374 10) 600701